ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ

МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք, Երևանյան
խճուղի 2-րդ փողոց 1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստgyuxmerdzavan@mail.ru

24.09.2012թ.
թիվ148

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա.Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2012թվականի սեպտեմբերի 14-ին կայացած N9 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 7/յոթ/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

8420-12
01 10 2012

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնքի,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1
հեռախոս (0231)6-00-25,էլ. փոստ
gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

14 սեպտեմբերի 2012 թվականի N 9 նիստի N 1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի սեպտեմբերի 14-ին կայացած N9 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

ՅՈՒՐԻԿ ՏՈՆՈՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՃԱՄԲԱՐՅԱՆ
ՀՐԱՉԻԿ ՋՈՒՄՇՈՒԴՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մերձավանի
գյուղական համայնքի ավագանու
2012 թվականի սեպտեմբերի 14-ի
N9 արտահերթ նիստի N1 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի հաստատման մասին:

Զեկ.՝ Լ. Գրիգորյան

2.Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

Զեկ.՝ Լ.Գրիգորյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 24-ի N13 հերթական նիստի N 07-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Զեկ.՝ Լ. Գրիգորյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին դրամական օգնություն տրամադրելու մասին:

Զեկ.՝ Լ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,Երևանյան
խճուղի 2-րդ փողոց1,հեռախոս ( 0231)6-00-25
էլ.փոստ gyuxmerdzavan@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

14սեպտեմբերի 2012թվականի N9 նիստի N2

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 627-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով և 2-րդ կետով, հաշվի առնելով, որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սեփականության իրավունքով չփոխանցվող հողերի ցանկում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի «գ» ենթակետը, «Գևորգ Ալոյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2012թվականի սեպտեմբերի 6-ին իրականացված քարտեզագրման եզրակացությունը և Գեղամ Միքայելյանի 2012թվականի սեպտեմբերիի 13-ին ներկայացրած դիմումն ու 2002թվականի մայիսի 16-ին կնքված հողամասի վարձակալության պայմանագիրն ու համայնքի ղեկավարի առաջարկությունն, ավագանին որոշում է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքի սեփականությունը հանդիսացող, Ուրց-Կոտայք-Շամիրամ գոտու, գյուղատնտեսական նշանակության 25,9հա 4-րդ կարգի վարելահողը օտարել ուղղակի վաճառքով՝ հողամասի վարձակալ Գեղամ Միքայելյանին :

2. Սահմանել հողամասի ուղղակի վաճառքի գինը՝ տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 30 691 500ՀՀ դրամ:

3. Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո , իրավունքների պետական գրանցման նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի մարզային ստորաբաժանում՝ կատարելու պետական գրանցում, սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| կողմ(5) | դեմ(0) | ձեռնպահ(0) |
| --- | --- | --- |

ՅՈՒՐԻԿ ՏՈՆՈՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՀՐԱՉԻԿ ՔՈՒՄԸՈՒՂՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1
հեռախոս (0231)6-00-25,էլ. փոստ
gyuxmerdzavan@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈւՄ

14 սեպտեմբերի 2012 թվականի N9 նիստի N3-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 13 ՆԻՍՏԻ N 07-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 24-ի N13 նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 07-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) հաստատված 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4131 հոդվածով նախատեսվածից 360 000ՀՀ դրամ ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածին.

2) հաստատված 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4131 հոդվածով նախատեսվածից 300 000ՀՀ դրամ ուղղել 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4212 հոդվածին.

3) հաստատված 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4251 հոդվածով նախատեսված 950 000ՀՀ դրամը ուղղել 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի 4729 հոդվածին.

4)ավելացնել հողի օտարումից եկամուտ 41 691 500ՀՀ դրամ և այն ուղղել հետևյալ ծախսերին՝

ա) 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5113 հոդվածին 6 000 000ՀՀ դրամ.

բ) 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 5122 հոդվածին 950 000ՀՀ դրամ.

գ) 01 բաժնի 6րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածին 12 430 700ՀՀ դրամ.

դ) 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 5113 հոդվածին 5 000 000ՀՀ դրամ.

ե) 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4511 հոդվածին 7 000 000ՀՀ դրամ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

ՅՈՒՐԻԿ ՏՈՆՈՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ
ՀՐԱՉԻԿ ՁՈՒԽՃՈՒՂՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մերձավանի գյուղական համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց 1
հեռախոս (0231)6-00-25,էլ. փոստ
gyuxmerdzavan@mail.ru

## ՈՐՈՇՈՒՄ

14 սեպտեմբերի 2012 թվականի N9 նիստի N4

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 24-ի N13 հերթական նիստի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի բյուջեն հաստատելու մասին» N07-Ն որոշմամբ հաստատված՝ «Սոցիալական ապահովության վճարներ» գումարից 40 000ՀՀդրամ տրամադրել Մերձավանի գյուղական համայնքի սոցիալապես անապահով՝Էմմա Սայադյանի ընտանիքին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

կողմ (5) դեմ (0) ձեռնպահ (0)

ՅՈՒՐԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՁՈՒՍՇՈՒՂՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ